



Տեսանկիւն

Անհաւատալի Բայց Իրաւ

Վերջերս հաղորդուեցաւ, որ ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան N զօրամասի պահպանութեան տեղամասերէն մէկուն մէջ, հայ դիրքապահներու կողմէ 18 Դեկտեմբերին ձերբակալուած են թշնամի Ազրայէճանի բանակին պատկանող երկու սահմանախախտ զինծառայողներ:



Ի զարմանս մեզի (ո՛չ անպայման սակայն), երեկ «Արմէնփրէս» հաղորդեց, որ ըստ ՀՀ պաշտպանութեան Նախարարութեան, 20 Դեկտեմբերին մարդասիրական նկատառումներով եւ Ռուսիոյ միջնորդութեամբ, Նշուած զինծառայողները վերադարձուէր են ազրայէճանական կողմին:

Իրաւապաշտպաններու հաշուարկով, շուրջ 50 հաստատուած եւ լրացուցիչ ալ 80 չհաստատուած գերի ունինք Ազրայէճանի մօտ այսօր: Մեր գերի ինկած տղոց տուն վերադարձնելու համար մեր թշնամին բնաւ ալ չաճապարեր...: Այս թիւին վրայ պէտք է նաեւ աւելցնեն ջանձնուած եւ շատ յաճախ խոշտանգուած Հայ զինուորներու դիակներ...:

Մինչ կը հաւատամ, որ Պաքուէն մեր տղոց տուն բերելու միակ արժանապատիւ ճանապարհը ամէն առիթով ազերի գերիներ վերցնելուն մէջ կը կայանայ, ըստ երեւոյթին մեր իշխանութիւնները ո՛չ միայն նոյն կերպով չեն մտածեր, այլ՝ կ'աճապարեն իրենց ձեռքը ինկած գերիները շատ արագ եւ սիրով վերադարձնել թշնամիին...: Մեզի կը մնայ միայն յուսալ, որ դարձեալ ըստ մեզի, պատմական մէկ թիւրիմացութեամբ մը մեր հայրենիքին ղեկավարութիւնը ձեռք ձգած տոյն անհասկնալի իշխանութիւնը ներողութիւն խնդրած չըլլայ թշնամիէն այս գերիները վերցնելու խնդրով...:

ՍԵԻՎԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Լիբանանեան Լուրեր

Յատկանշական Այցելութիւն Մը

Անակնկալ եւ յատկանշական քայլով մը ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար՝ Անթոնիօ Կոթերէշ Պէյրուք այցելեց:

Ընդհ. Քարտուղարը իր չորսօրեայ այցելութեամբ հանդիպումներ կ'ունենայ Լիբանանցի բարձրաստիճան պատասխանատուներու հետ, փորձելով կեանք տալ Լիբանանի համար նախատեսուած Ֆրանս-Մեծնական նախաձեռնութեան: Իրողապէս տոյն այցը կարեւոր կարելի է նկատել եթէ Լիբանան գիտնայ օգուտիլ առիթէն:

Լիբանանի տուած այցելութեան ծիրէն ներս ՄԱԿ-ի Ընդհանուր Քարտուղար Անթոնիօ Կոթերէշ երեկ հանդիպած է Լիբանանի կրօնական համայնքապետներուն:

Հանդիպման ներկայ եղած է նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գ.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը:

Յարդ այցելութեան խորքային նպատակներուն մասին տեղեկութիւններ չեն հաղորդուիր, սակայն յստակ է, որ ՄԱԿ-ի կողմէ այս զօրակցական փորձը ունի որոշակի պատգամներ ուղղուած ոչ միայն Լիբանանի քաղաքական վերնախաւին, այլ Լիբանանեան թղթածրարին հետ կապ ունեցող շրջանային եւ միջազգային խաղացողներուն:

ԿՈՉ



Ռ.Ա.Կ.-ի Միասնականութեան Նախաձեռնող Ղեկավարներու Համախմբում

Դեկտեմբեր 19, 2021

Ռ.Ա.Կ.-ԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՅՔ ԶՆՉԱԾ Է ԱՐԴԵՆ

Սիրելի եւ հաւատաւոր ընկերներ,
Ռամկավար Ազատական Կուսակցութեան

Այսօր մայր հայրենիքը կը գտնուի ճակատագրական մարտահրաւերներու դիմաց: Պատմութեան ժլատ պատեհութիւններէն ստեղծուած երեսնամեայ անկախ Հայաստանը եւ Արցախը կը դիմագրաւեն իրենց լինելութեան օրհասական հեռանկարը: Իր դարաւոր պատմութեան մէջ Հայաստան քանիցս կորսնցուցած է իր պետականութիւնը, մեր լուսաւոր ժողովուրդը ենթարկելով օտար տիրապետութեանց, թէեւ այնուհետեւ յաջողած է վերականգնիլ:

Ներկայ սերունդներուն սեպուի պարտքն է՝ արեան, արցունքի ու տառապանքի գնով ձեռք բերուած պետականութեան պահպանութիւնն ու յաւերժացումը:

Սփիւռքը իր հերթին կ'ապրի իր ղեկավարութեան տագնապը, թերանալով ինքնակերտումի եւ հայրենիքին սատարելու իր պարտաւորութեանց մէջ, հակառակ միտքի, մշակույթի, նիւթական ինչքի անսախընթաց հարստութեան:

Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը որ իր հարիւրամեայ պատմութեամբ կենսական դեր մը կատարած էր մեր ժողովուրդի ամենէն սուր ու տագնապալի հանգրուաններուն՝ այսօր կը գտնուի տխուր վիճակի մէջ, կարենալ շարունակելու իր ազգային ու գաղափարական առաքելութիւնը, այս օրուան մարտահրաւերներուն դիմաց:

Ներկայ ժամանակներու համաշխարհայինացումի պայմաններուն մէջ ամէն ազգային կառոյց կը գտնուի անհրաժեշտութեան դիմաց՝ պատշաճելու ընկերութեան նոր պայմաններուն, կարենալ համահունչ գործելու արդի կեանքի տուեալներուն ներքեւ:

Իր հերթին Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը բովանդակ աշխարհի մէջ, կը գտնուի հարկադրանքին առջեւ իր տունը կարգի դնելու:

Իր հայրենանուէր առաքելութեան մէջ ՌԱԿը ջահակիրներէն հանդիսացած է Հայկական Դատի արի պայքարին. նոյնպէս կամրջած է հայրենի ժողովուրդը ի սփիւռս աշխարհի տարածուած հայութեան հետ, իր հերթին իրագործելով քաղաքական հաւասարակշռութեան անփոխարինելի դերը: Սակայն, այսօր դէպքերը կը զարգանան ու կ'անցնին մեր կողքէն, կը յառաջանան մարտահրաւերներ, որոնք կը մնան անպատասխանի, երբ անցեալին մեր ղեկավարութիւնն ու անդամակցութիւնը պատասխանատուութեամբ կը դիմագրաւէին զանոնք ու կու տային ձեւ ու կերպարանք, ինչպէս նաեւ խոհական լուծումներ:

Կուսակցութիւնն ու կուսակցականներս անգոր կը դիտենք դէպքերու ընթացքը եւ մեր անգորութիւնը ամօթով ու պարտազանցութեան զգացումով կը վիրաւորէ մեր գաղափարական արժանապատուութիւնը. որովհետեւ իրերամարտ հատուածներով կը մնանք բաժնուած ու պառակտուած:

ՌԱԿը կերտելէ ետք իր փառաւոր պատմութիւնը՝ ապրեցաւ նաեւ իր անկումի ու պառակտման վիճակները: Այսօր իր բնօրրանը հանդիսացող Սփիւռքի մէջ ոչ մէկ կառոյց, խմբաւորում եւ մարմին որ կը գործէ ՌԱԿի պիտակին ներքեւ, արդարացումը ունի գոյացած ըլլալու կուսակցութեան ծրագիր-կանոնագրի օրէնքներով:

Շար. Էջ 02

ԿՈՉ

Ռ.Ա.Կ.-ԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՅՆ ԶՆՉԱԾ Է ԱՐԴԵՆ

Սկիզբը էջ 01

Օրինականության սկզբունքը մնացած է ետին, ասպարեզը բանալով նոր էջի մը անհրաժեշտություն:

Մենք, որպես նախաձեռնող խումբ մը ՌԱԿի ղեկավարներ, պատասխանատու կը զգանք մենք զմեզ մեր պատմության, մեր շարքերուն եւ մեր ժողովուրդին դիմաց՝ անկարելին գործադրելով իրականացնելու կուսակցության միաւորումը. որովհետեւ չենք կրնար կիսաւարտ թողուլ մեր առաքելությունը մեր պատմության ու ժողովուրդին դիմաց:

Ենթականներս յաճախ ունեցած ենք տարակարծություններ իրարու հետ, եւ գուցէ կը շարունակենք ունենալ: Սակայն կուսակցության ճակատագրական միասնականությունը գերիվեր նկատելով ամեն կարծիքէ՝ կը միանանք այս կոչին մէջ:

Իբրեւ նախկին ղեկավարներ, մենք մեր տուրքը տուած կը նկատենք մեր սիրելի կուսակցության եւ անպայմանօրէն յաւակնութիւն չենք սնուցաներ պաշտօններ եւ պթոններ գրաւելու:

Ժամանակը հասած է նոր սերունդի ղեկավարության յանձնելու այս պատմակշիռ կազմակերպության առաջնորդութիւնը եւ սատարելու այդ ղեկավարության բոլոր միջոցներով, յաջողակնելու եւ շարունակելու կուսակցության պատմական առաքելութիւնը:

Մեր շրջանակներէն հասնող անկեղծ կոչերով՝ նախկին ղեկավարներու այս շարժումը կը յաւակնի ներկայացնել շարքերու մեծամասնության սրտի կոչը՝ միասնականութեան:

Մեր նախաձեռնութիւնը առ այսօր պատրաստի տարազներ չունի առաջարկելիք, ոչ ալ՝ թեկնածուներ պաշտօններ գրաւելու. մեր նախաձեռնութիւնը կը բխի այն խորունկ հաւատքէն որ ՌԱԿը պետք է վերականգնի եւ մեր սերունդի պարտքն է իրականացնել այդ վերականգնումը: Այսու կոչ կ'ուղղենք բոլոր անհատ կուսակցականներուն, մարմիններուն եւ շրջանակներուն՝ ոչ թէ միանալու մեզի, այլ ստեղծելու հասարակաց բեմ մը ուր բոլորս կրնանք համախմբուիլ աննախապաշար հոգիով ու ձեռնարկել վերամիաւորման սրբազան գործին: Գործնական յաջորդ քայլերը պիտի առաջարկենք մեր յաջորդ յայտարարության մէջ:

Միասնականության պահը հնչած է արդէն:

Ռ.Ա.Կ.-Ի ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՐՈՂ
ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԶԱՄԱՆՄԲՈՒՄ

Դոկտ. Արշաւիր Կեօնեան (Մոնթրէալ)

Յակոբ Գասարեան (Պէյրոս)

Սերխիօ Նահապետեան (Պուէնոս Այրես)

Երուանդ Ազատեան (Տիբորյո)

Վարդան Նազիրեան (Լոս Անճելէս)

Դոկտ. Գրիգոր Ատանալեան (Լոս Անճելէս)

Դոկտ. Զրաչ Գուլումեան (Լոնտոն)

Յակոբ Աւետիքեան (Երեւան)



Պատմութեան Մէջ Այսօր

Արփիար Արփիարեան



Արփիար Արփիարեան (21 Դեկտեմբեր 1851, Սամսոն - 12 Փետրուար 1908, Գահիրէ), գրող, գրական քննադատ, հրապարակախօս եւ խմբագիր:

Ծնած է Սամսոնի նաւահանգիստը, երբ ծնողքը Ակնէն Պոլիս կը փոխադրուէր:

Աւարտած է Վենետիկի Մուրատ Ռափայելեան վարժարանը: Պոլիս վերադարձին նուիրուած է լրագրութեան: Զիմնադրած է «Արեւելք» եւ «Հայրենիք» օրաթերթերը, որոնք մեր իրապաշտ գրականութիւնը սկզբնաւորեցին ու տարածեցին: Եղած է նաեւ ազգային երեսփոխան: Որոշ շրջան մը որպէս յեղափոխական բանտարկուել է ետք, անցած է Եւրոպա, ապա Գահիրէ, ուր սպաննուած է իր հակառակորդներուն կողմէ:

Արեւմտահայ ղեկավարութիւնը 1877-78-ին մեծ պետութիւններուն ներկայացած էր բարենորոգումներու պահանջով: Բայց դիւանագիտական խաղերու բերումով՝ այդ քայլը եղած էր ապարդիւն. աւելին՝ դարձած էր պատրուակ նոր ու անպատիժ հալածանքներու: Իսկ 1880-ական տարիներէն՝ հայութեան մէկ մասը կը մղուէր

դէպի զինեալ պայքար, դէպի Խրիմեանի «երկաթ շերտեր»: Նպատակ՝ զանգուածները դուրս բերել զոհի վիճակէն, զայն լծել տարրական իրաւունքներու զինեալ պաշտպանութեան: Հնչակեան կուսակցութիւնը եւ Հ.Յ.Դաշնակցութիւնը, գրեթէ միաժամանակ, խումբեր եւ կառոյցներ ստեղծեցին նաեւ Պոլիս մայրաքաղաքին մէջ:

Հնչակեանները, ցոյցերու ոճ մը որդեգրելով, 1890-ին հոն կազմակերպեցին Գում Գաբուի ցոյցը: Հայութիւնը ամեն տեղ չունէր նոյն դիրքորոշումը: Այդ բնական էր. զինեալ պայքարը բացառիկ յատկութիւններ ու զոհողութիւն կը պահանջէր: Ապա՝ քաղաքներու ունեւոր եւ «ղեկավար» խաւը, մեծ մասամբ այդ գիծը հակառակ կը նկատէր իր անմիջական շահերուն: Այս երկուութիւնը կը տիրէր 1890-ի շուրջ, երբ յեղափականները Պոլսոյ մէջ գործի կանցնէին: Արփիարեան, իբրեւ մաս հնչակեան ղեկավարութեան, մօտէն կը տեսներ, Գում-Գաբուի ցոյցի շարժման հետ՝ նաեւ հետեւող ճնշումն ու հալածանքը, ինչպէս եւ զանազան խաւերուն կեցուածքը: Եւ տասնամեակ մը ետք, ալ Պոլսէն հեռացած ու Եւրոպա տարագրուած, այդ փորձառութիւնը կը վերածէր «Կարմիր ժամուց»ին:

Բացի իր հրապարակագրական բազմաթիւ յօդուածներէն գրած է նաեւ վիպակներ.

Արփիարեան իրապաշտ շարժումի առաջին եւ լաւագոյն ներկայացուցիչներէն եղած է: Որպէս հրապարակագիր թարմ շունչ բերաւ մեր լրագրութեան իր սուր միտքով, ազատամիտ ու համարձակ գաղափարներով եւ ժողովուրդը լուսաւորելու ձգտող իր յօդուածներով:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս «Ս. Մեսրոպ Մաշտոց» Շքանշանով Պարգևատրեց Դոկտ. Զրայր ՃԵՎԵՃԵԱՆԸ



Կիրակի, 19 Դեկտեմբեր 2021-ին, Ս. Եւ Ամմահ Պատարագէն անմիջապէս ետք, Անթիլիասի Մայրավանքի Վեհարանի դահլիճին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով գնահատեց հրապարակագիր ու Ծոցի երկիրներու Աստուածաշունչի Ընկերության ընդհանուր քարտուղար դոկտ. Զրայր

ՃԵՎԵՃԵԱՆԻ մտաւորական ու ծառայական աշխատանքը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Կաթողիկոսարանի Հայագիտական Կեդրոնի

պատասխանատու Ահարոն Շիրսումեան: Ան իր խօսքին մէջ շեշտեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համահայկական առաքելութիւնը: Այս ծիրէն ներս ան կեդրոնացաւ յատկապէս Կաթողիկոսարանի մշակութային առաքելութեան՝ անդրադառնալով զանազան բնագաւառներուն: Շիրսումեան նաեւ յիշեց, թէ Վեհափառ Հայրապետը ո՛չ միայն նախաձեռնողն է կարելոր աշխատանքներուն ու եզակի իրագործումներուն, այլ նաեւ գնահատողը անոնց իրագործման մասնակից դարձող մտաւորականներուն: Ներկայ հաւաքը, պատուելու համար դոկտ. Զրայր ՃԵՎԵՃԵԱՆԸ, պերճախօս վկայութիւն մըն է այս ուղղութեամբ:

Բացման խօսքին յաջորդեց Նորին Սրբութեան պատգամը: Վեհափառ Հայրապետը իր խօսքին մէջ շեշտեց, թէ մարդը արժէք կը դառնայ ոչ թէ իր ունեցածով, այլ ծառայութեան ճամբով իր տուածով՝ նախ Աստուծոյ ապա իր եկեղեցւոյ ու ազգին: Նորին Սրբութիւնը նաեւ յիշեց, որ նահանջի ու անտարբերութեան մթնոլորտը սկսած է իր ներկայութիւնը զգալի դարձնել հայ կեանքէն ներս, ամեն տեղ:

Տեսակետ

Տոնական Այս Օրերուն (Վերջին Լուրեր ԱՄՆ-ից)

ԱՐՄԵՆ ՅՈՎԱԵՓԵԱՆ

Մօտենում են տոները ու կեանքը եռում է Լոս Անճելեսում: Շուկաները լեցուն են, մարդիկ գնումներ են անում: Նրանք կարծես մոռացել են, որ մեկ տարի առաջ, ամիսներ առաջ ինչ վատ պայմաններում էին յայտնուել քորոնավիրուսի եւ աշխատանքները կրճատուելու պատճառով: Չմեղադրենք մարդկանց, տոն օրեր են գալիս:

Յաճախ մտածում եմ՝ ի՞նչն է պատճառը, որ ամերիկացիները, գուցե անհաշիւ գնումներ են անում: Ու եզրակացրել եմ,- Այստեղ, գուցե եւ ամեն տեղ, այսպէս է: Սովորական ժողովուրդը ընդհանրապէս ուրիշ զբաղմունք չունի, իր համար ընտրել է մեծ գումարներ ծախսելը՝ նորաոճ հագուստներ, տան նոր կահկարասիներ ձեռք բերելը: Ոմանք դա դարձրել են իրենց կեանքի նպատակը:

Նայում եմ շրջապատս. իմ ծանօթներն ուրիշ են: Նրանց միաժամանակ ունեն ուրիշ հետաքրքրութիւններ, որ դուրս է անձնականից, կենցաղայինից: Անձնական/ ընտանեկան կեանքում էլ ունեն ուրիշ հետաքրքրութիւններ, որոնք առնչւում են մշակոյթին, գիր ու գրականութեանը, հասարակական, համայնքային աշխատանքներին: Ու նկատում եմ, որ հենց այսպիսիներն են տարբեր: Սովորական ամերիկացիները չունեն նման հետաքրքրութիւններ, կեանքը թեթեւ են տանում ու սահմանափակւում են խանութներ այցելելով, «նորը» փնտրելով: Ոչ ոք չի կարող ասել այս երկու իրականութիւններից ո՞րն է ճիշտը: Ճիշտ չկայ աշխարհում, կատարեալ չկայ աշխարհում, ամեն ինչ համեմատական է, ուրեմն փակենք աս նիւթը ու չդատենք մեզ ու մարդկանց:

* * *

Տոնական օրերը չխանգարեցին, որ մի քիչ դադար տրուի քաղաքական կեանքին: Այս երկուսն էլ լրիւ տարբեր իրականութիւններ են: Չդատենք նաեւ այս երկուսը, միայն տեղեկութիւններ փոխանցեմ վերջին զարգացումներից, որ, իմ կարծիքով, կարելւոր են:

ա- Ամենատիւրը քորոնավիրուս վարակից մահացածների թիւն է Միացեալ Նահանգներում. դա անցաւ 800,000-ից, այն պայմաններում, երբ մարդիկ սրսկւում են:

բ- Գալիֆորնիացիներին յուզում է նահանգապետի երկար բացակայութիւնը: Նա չկայ ընդհանրապէս: Մօտ մէկ շաբաթ առաջ, մի լուր կարդացինք, որ նա ուզում է նահանգային օրէնսդրի օրակարգ տանել նահանգում տաք զենքի օգտագործման հետ կապուած մի նոր նախագիծ: Միայն դա:

գ- Գալիֆորնիա նահանգի 3այ համայնքի կարգ մը կազմակերպութիւններ մտահոգութիւն են յայտնել Գալիֆորնիա նահանգում ընտրական տեղամասերի նոր դասակարգման/ ուրիշ տարածքներ ձեւաւորելու կապակցութեամբ, որով, ըստ ոմանց, նուազելու է հայութեան դերը նահանգային ընտրութիւններում: Լոս Անճելեսի հայահոծ չորս քաղաքներ՝ միասին, մէկ ընտրատեղամաս էին կազմում, որտեղ համարեայ միշտ յաղթել են 3այկական կազմակերպութիւններու հովանաւորութիւնն ունեցող թեկնածուները: Նոր բաժանման հետեւանքով, այդ 4 քաղաքը բաժանուել են ու կցուել իրենց մօտ ուրիշ քաղաքներին: Այսպիսով հայերի թիւն էլ բաժանուել է, ու նոր տարածքներում հայերը չեն ունենայ վստահելի յաղթանակ տանելու հնարաւորութիւնը: 3ետեւաբար՝ հարցական է այդ նոր ընտրատարածքներում հայկական կողմերու հովանաւորած թեկնածուների յաղթանակը: Ընտրատեղամասերի նոր բաժանումը անհրաժեշտ էր. 2021 թուականի մարդահամարի հիման վրայ՝ նահանգից գաղթել են մեծ թուով բնակիչներ: Բնակչութեան տեղաշարժ է տեղի ունեցել նաեւ Գալիֆորնիայում: 3ենց հայերը՝ հայերի համեստ խաւը, որոնք չէին կարող դիմանալ Կլենդելում տան վարձերի սոսկալի բարձրացմանը, այս տարիների ընթացքում դուրս են եկել Կլենդելից: Սրա

պատասխանատուն հենց Կլենդելի քաղաքային խորհուրդն է, որոնց մեծամասնութիւնը հայեր էին... Այս հարցը ժամանակին պիտի ուշադրութեան առարկայ դառնար, որպէսզի հիմա նման վիճակի առաջ չկանգնէին համայնքային ղեկավարները: Նրանց հաղորդածի համաձայն՝ արդիւնք չեն տուել բազմաթիւ հանդիպումները՝ ընտրատեղամասերի նոր բաժանումը բեկանելու համար, թէեւ աշխատանքները շարունակւում են: Սպասենք վերջնական արդիւնքին:

դ- «Խելառների» պիւտճէի կապակցութեամբ նորութիւն չկայ: Ստորին պալատը վաւերացրել է մօտ 2 թրիլիոն տոլար: Նախագիծը փոխանցուել է Սենատ: Դեմոկրատները չեն կարողանում համախոհութիւն գոյացնել: Վերջերս կարդացի մի լուր՝ ըստ որի՝ դեմոկրատ մի ուրիշ սենատոր առաջարկել է մեծ կրճատումներով վաւերացնել այս նախագիծը, որը լինի Նոր տարուայ «լաւ նուէր» ամերիկացիներին: Նրա առաջարկածը 1.2 թրիլիոն դոլար է, որին խիստ դժմ գնաց դեմոկրատների ծայրայեղական թեւը: Ամեն դէպքում, չի թոււմ, որ այս նախագիծը մինչեւ տարեվերջ կը քուէարկուի Սենատում:

ե- Դեմոկրատները կտրուկ քաղաքականութիւն են փոխել՝ 2022 թուականի Գոնկրեսի ընտրութիւնների կապակցութեամբ: Եթէ մինչեւ մի քանի օր առաջ, բոլոր լրատուները նշում էին, որ այդ ընտրութիւններում հանրապետականները կը յաղթեն, հիմա նոր մօտեցման է երեւում ընդհանրապէս: Ծօ Պայտընը առաջինն էր, որ ասած դեմոկրատները գնում են 2022-ի նոր յաղթանակ տօնելու... Այս խօսքին լուրջ չվերաբերեց մամուլը, քանի որ դա համարեայ անարձագանգ մնաց:

զ- Դեմոկրատ լրատուները սկսել են վարկանիշի նոր թուեր հաղորդել... Ըստ «Նոր» հարցախոյզերի՝ փոխնախագահ Զամալա 3արիսը, որ մինչեւ մէկ շաբաթ առաջ՝ հենց դեմոկրատ լրատուների համաձայն, չունէր նոյնիսկ 10 տոկոս վարկանիշ, հիմա նրա վարկանիշը դարձել է 43 տոկոս: (*Մի հարցնող լինի՝ ի՞նչ կարելւոր բան տեղի ունեցաւ անցած շաբաթ, որ 3արիսի վարկանիշը այսքան մեծ աճ արձանագրեց*):

է- Միաժամանակ խօսւում է 2024 թուականի՝ ԱՄՆ-ի նախագահական ընտրութիւններին հաւանական դեմոկրատ թեկնածուների մասին: Լրատուները շրջանառութեան մէջ են դրել 11 դեմոկրատի անուն՝ 6-ը կին՝ ներառեալ 3արիսը: Եւ այդ ցանկում առայժա չկայ Նանսի Փելոսիի զարմիկ՝ ԿԳալիֆորնիայի նահանգապետ Նիւսամի անունը...

ը- Բայց չշտապենք: Նանսի Փելոսին, կարծես մտափոխուել է... Նա մի քանի օր առաջ յայտարարեց, որ պատրաստոււմ է իր թեկնածութիւնը դնել 2022-ի Գոնկրեսի ընտրութիւններում, բայց եթէ Ստորին պալատի ընտրութիւններում յաղթեցին դեմոկրատները, նա չի լինելու խօսնակ:

թ- Նախագահ Թրամփին հարցաքննել են իր տուրքերի կապակցութեամբ: Սակայն ԱՄՆ-ում չկայ որեւէ օրէնք, որը պարտադրի նախագահին՝ հանրայնացնելու իր տուրքերի զեկոյցը: Դա մնում է անձին: Սրանք այն ամենն են, որ պատահում են հիմա Միացեալ Նահանգներում՝ տօնական այս օրերին:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս...

Սկիզբը էջ 02

Որեւէ ժամանակէ աւելի մենք կարիքը ունինք Աստուծոյ, ազգին ու հայրենիքին ծառայողներուն՝ մեր հաւաքական կեանքին իրենց նուիրեալ ու գործօն մասնակցութեամբ: Խօսելով 3րայր Ճեպէճեանի մասին, Նորին Սրբութիւնը ըսաւ, թէ ան իր ծառայութիւնը բերաւ գիրի ու գրականութեան ճամբով: Ան Աստուածաշունչը հասանելի դարձուց թէ՛ մտաւորականին եւ թէ՛ մանուկին ու պատանիին: Իր ծաւալուն աշխատանքներուն կողքին մնայուն ներկայութիւն դարձաւ հայ մամուլին մէջ՝ մտաւորական վաստակ ձեռք բերելով այդ բնագաւառէն ներս: Այսպէ՛ս արժեւորեց ան իր կեանքը եւ այսօր արժանի է Մեր գնահատանքին:

Նորին Սրբութեան խօսքէն ետք ընթերցուեցաւ 3այրապետական սրբատառ Կոնդակը, ուր Վեհափառ 3այրապետը բարձր կը գնահատեր դոկտ. Ճեպէճեանի երկար տարիներու վաստակն ու ծառայութիւնը: Կոնդակի ընթերցումէն ետք Նորին Սրբութիւնը «**Ս. Մեսրոպ Մաշտոց**» շքանշանով զարդարեց դոկտ. 3րայր Ճեպէճեանի կուրծքը:

3անդիսութեան աւարտին, դոկտ. Ճեպէճեան իր որդիական երախտագիտութիւնը յայտնելով Վեհափառ 3այրապետին՝ ըսաւ, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իբրեւ փարոս հայ մշակութային կեանքի ու հաւատքի առաքելութեան, միշտ կը մնայ բոլորին տունը: 3ետեւաբար, այսօրուան պարգեւատրումը ինծի համար վերանորոգող մղիչ ոյժ մը դարձաւ իմ ծառայութիւնս աւելիով կատարելու հայ կեանքէն ներս:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ՌԱԿ Մ. Տամատեան ակումբի անդամական ժողովը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի 4 Յունուար 2022-ի երեկոյեան ժամը 7:30-ին Թէքեան կեդրոնի մէջ, Ժըմմէյզի:

Կեանքը ՊԵՂՈՒԹԻ Վահան ԹԵՔԵՏԱՆ Վարժարանին ՄԵջ

Երկու Տարւան Բացակայութենէ Ետք, Դարձեալ Թնդաց Ամանորը Վահան ԹԵՔԵՏԱՆ Վարժարանէն Ներս

Նոր տարին գեղեցիկ ու երկար սպասուած տօն է, յատկապէս մանուկներու համար: Կը թուի, թէ՛ մենք ամէն ինչ գիտենք ու այլեւս բան չէ մնացած սորվելու եւ իմանալու այս հիասքանչ տօնի մասին:



Ամանորը կը մօտենայ: Ամէն մարդ իւրայատուկ ձեւով կը պատրաստուի Նոր Տարին դիմաւորելու: Իւրաքանչիւր տօն իր մէջ կը պարփակէ գեղեցիկ խորհուրդ ու նշանակութիւն, որ արժէք և իմաստ կու տայ տօնակատարութեան:

Շուտով ականատես պիտի ըլլանք մանուկ Նոր Տարին զուարթ ճախրանքով երկիր գալուն՝ իրեն հետ բերելով խիստ եւ խաղաղութիւն,



ինչպէս նաեւ անոր զանազան սովորութիւններով եւ զարդարուած ծառերով:

Հինգշաբթի, 16 Դեկտեմբեր 2021-ի առաւօտուն, Մանկապարտեզի փոքրիկները վարժարանիս Ծնողաց յանձնախումբի կողմէ տրամադրուած նախաճաշէն ետք, խանդավառ մթնոլորտի մէջ սրահ բարձրացան, ուր զիրենք անհամբեր կը սպասէին The Powerful Kids Team-ի կերպարները, որոնց հետ պարեցին, երգեցին եւ կազմակերպուած խաղերուն մասնակցեցան, ապա անհատաբար եւ խումբով նկարուեցան Կաղանդ Պապուկին հետ, որմէ ետք մեր վարժարանին կողմէ տրամադրուած նուէրներով ցնծութեամբ վերադարձան իրենց տունները:

Տօնակատարութեան 2-րդ մասով Հայերէնի ուսուցիչ՝ Պրն. Աւետիս Տիպան շրջելով դասարանները մթնոլորտը խանդավառեց սրինգին վրայ նուագելով Ամանորի եւ Սրբ. Ծննդեան մեղեդիներ, որմէ ետք նախապատրաստական Ա.ԷՆ միջնակարգ Գ. դասարանի աշակերտները շրջան առ շրջան հաղորդութիւն ստացան ձեռամբ Վարդանանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արծանապատիւ Տէր Խորէն քին. Մելքոնեանէն:

Հաղորդութեան արարողութենէն ետք, մեր վարժարանին ժրաջան Ծնողաց Յանձնախումբի կողմէ հրամցուեցաւ ծոթրինով հաց, պտղահիւթ եւ կարկանդակ, որմէ ետք աշակերտները սրահ բարձրացան, ուր զիրենք դիմաւորեցին The Powerful Kids Team-ի կերպարները, մեծ խանդավառութիւն մը ստեղծելով անոնց մօտ: Կերպարները հանդէս եկան իրենց կողմէ պատրաստուած ճոխ ներկայացումով մը, ինչպէս նաեւ



տեղի ունեցան երգ, պար ու խաղեր: Յայտագրի աւարտին աշակերտները, ուսուցիչները եւ Ծնողաց յանձնախումբը նկարուեցան կերպարներուն հետ: Վերջապէս՝ մեր վարժարանին կողմէ բոլոր աշակերտներուն նուէրներ բաժնուեցան, ինչպէս նաեւ կրկնեփուկ՝ տրամադրուած ուսուցչուհի Տիկ. Նաուալ Ժըրժըսի կողմէ:

Հուսկ, կը մնայ բոլորին շնորհաւորել գալիք Ամանորն ու Սրբ. Ծնունդը՝ մաղթելով որ 2022 տարին ըլլայ առողջութեան, խաղաղութեան, արեւշատութեան եւ յաջողութիւններով լեցուն բեղումնաւոր տարի մը:

**Վահան ԹԵՔԵՏԱՆ Միջն.Վարժարանի
Լրատուական Գրասենեակ**



ՇՆՈՐՀԱԴՈՐԱԳԻՐ



ՊԵՂՈՒԹԻ Վահան ԹԵՔԵՏԱՆ Միջն. Վարժարանի Հոգաբարձութիւնն ու Տնօրէնութիւնը ջերմապէս կը շնորհաւորէ ՊԵՂՈՒԹԻ Վահան ԹԵՔԵՏԱՆ Միջն. Վարժարանի Հոգաբարձութեան Անտեսադպիր Տոքթ. Յակոբ Փափագեանը Արցախի Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Սփորթի Նախարարութեան կողմէ շնորհակալագրով պարգևատրուելու առիթով՝ ԹԵՔԵՏԱՆ Մշակութային Միութեան միջոցով իր կատարած անվիատ ներդրումին, սատարելով մեր ազգային կրթութեան ու մշակոյթի ինքնութեան պահպանման: Տոքթ. Յակոբ Փափագեանին կը մաղթենք քաջառողջութիւն եւ յարատեւ յաջողութիւններ:



Լիբանանահայ Կեանք

ՀԲԸՄ-ը Համաժողով Մը Կը Կազմակերպէ Տեղասպանութեան Մասին՝ Մշակութային Իրաւունքներու Ոսպնեակին Ընդմէջէն

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (ՀԲԸՄ, Լիբանան) համագործակցութեամբ Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Իսամ Ֆարէս Հանրային Զաղաքականութեան ու Միջազգային Հարցերու Հաստատութեան (IFI-AUB) եւ Պոտսդամի Տեղասպանութեան Ուսումնասիրութիւններու Լէփսիւս Հաւսիս (Lepsius Haus) հետ, առջանց գիտաժողով մը կազմակերպեց «Տեղասպանութիւնը՝ Մշակոյթի Ոսպնեակին Ընդմէջէն» պիտակին տակ:

Լայնօրէն դիտուած այս գիտաժողովը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 7 Դեկտեմբեր 2021-ին, «Տեղասպանութեանց զոհերու յիշատակին ու արժանապատուութեան եւ յանձնագործութեան կանխարգելման միջազգային օր» ուան առիթով, որ ամէն տարի կը նշուի 9 Դեկտեմբերին: ՀԲԸՄ Լիբանանը եւ Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Իսամ Ֆարէս Հանրային Զաղաքականութեան եւ Միջազգային Հարցերու Հաստատութիւնը երկարամեայ գործընկերներ են, որոնք ամէն տարի կը համագործակցին այս առիթով, հիւրընկալելով ականաւոր բանախօսներ Տեղասպանութեան կանխարգելման հետ առնչուող հարցերը քննարկելու նպատակով: Աւելին, փոխ-ըմբռնման յուշագիր մը կը միացնէ ՀԲԸՄ-ն ու Լէփսիւս Հաւսիսը (Lepsius Haus), որոնք 2016-էն ի վեր կը համագործակցին իրարու հետ, Հայաստանի եւ Սփիւռքի հետ կապուած տարբեր ոլորտներու շուրջ: Համաժողովը բաղկացած էր երկու մասերէ եւ տեւեց մէկ ու կէս ժամ, զոր վարեց Իսամ Ֆարէս Հաստատութեան ներկայացուցիչ Պրն. Եղիա Թաշճեանը:

ՀԲԸՄիութեան Վարիչ Տնօրէնուհի Օրդ. Արին Ղազարեան ու Պէյրութի Ամերիկեան Համալսարանի Իսամ Ֆարէս Հանրային Զաղաքականութեան եւ Միջազգային Հարցերու Տնօրէն Դոկտ. Ժոզէֆ Պահուր հանդէս եկան բացման խօսքով ու շնորհակալութիւն յայտնեցին ներկաներուն այս հետաքրքրական ձեռնարկին մասնակցելուն առիթով: «Այսօրուան համաժողովը պիտի կեդրոնանայ Տեղասպանութեան վրայ՝ մշակոյթներու ոչնչացման լոյսին ներքեւ ու պատմութեանը եւ յիշողութիւններու կառուցման մասին» հաստատեց Օրդ. Ղազարեան:

«Հակառակ շատերու մտածելակերպին, մշակոյթը, ժառանգութիւնը,

յիշողութեան հաւաքական ինքնութեան խնդիրները կողմնակի ցուցադրութիւններ չեն: Անոնք կողմնակի ցուցադրութիւն չեն, անոնք ճարտարութիւն չեն դժուարին քաղաքականութեան դէմ: Անոնք ազգային կառուցման, հաւաքական յիշողութեան եւ ինքնութեան հիմքերն են: Բազմաթիւ անգամներ առնչուած են նաեւ տնտեսութեան հետ: Այսպիսով՝ անոնք իսկապէս կայունութեան հիմքերուն մէջ են» շեշտեց Դոկտ. Պահուր:

Լէփսիւս Հաւսիս Փոթսդամի (Lepsius Haus Potsdam) փոխ-տնօրէն Դոկտ. Ռոյ Զնօք լուսարձակեց բարոյական չարիքի եւ մշակութային ժառանգութեան կորուստի միջեւ փոխ-յարաբերութիւններուն վրայ, մշակութային ուսումնասիրութիւններու եւ փիլիսոփայական տեսանկիւններէն դիտուած: Դոկտ. Զնօք նշեց որ թէեւ Միջազգային Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) 1948-ի Համաժողովին մէջ, մշակութային ցեղասպանութեան ոչ մէկ երեւոյթ չէ յիշուած, սակայն, մշակութային ցեղասպանութեան կապակցութեամբ, պատմական ու ժամանակակից հասկացողութիւններ կը գտնուին:

Ապա Դոկտ. Զնօք հարցադրեց թէ ինչու մշակութային բազմազանութիւնը պէտք է ցանկալի նպատակ ըլլայ, երկու հիմնական փաստեր ներկայացնելով: Նախ ան քննարկեց արժեքային բազմակարծիքութեան փաստարկը՝ որ արձագանք է բարոյական միակամութեան, ուր բոլոր հարցերը կը նուազին հասնելու մէկ հնարաւոր պասաժանի՝ գնահատելու համար մէկ արժեք օգտագործելով: Արժեքային բազմակարծութեան փաստարկը մարդոց հնարաւորութիւն կու տայ տարբեր մշակութային աշխարհներ ընտրելու: «Եթէ մշակոյթներ կազմող խումբերն ու հաւաքականութիւնները ոչնչացուին, ապա մարդկային ազատ ընտրութեան հիմնական եղանակը կը սահմանափակուի»: Երկրորդ կէտը յիշողութիւնն ու բազմակարծութիւնն է ուր անցեալի յիշողութիւնները, խօսքերը, գործերը, ուրախութիւններն ու վիշտերը մշտական տեղ կը գրաւեն աշխարհին մէջ, պարզապէս այն պատճառով որ մարդիկ կրնան յիշել այդ բոլորը: «Յիշողութեան, մշակութային իրականութեան եւ դատողութեան ոչնչացումը ցեղասպանական պայմաններուն մէջ ձեռք ձեռքի կու տան» յայտարարեց Դոկտ. Զնօք, միաժամանակ հաստատելով որ



Տեղասպանութեան զոհերը արդէն յիշողութիւն են:

Առաջին բաժին: Մշակութային միջամտութիւնները որպէս կանխարգելում՝ Դոկտ. Հեղնար Ուաթենփօս, արուեստի ու ճարտարապետութեան Դասախօս UC DAVIS-ի մէջ, ուսումնասիրեց մշակութային ժառանգութեան եւ մարդկանց իրաւունքներու միջեւ կապերը, արուեստի պատմութեան տեսանկիւնէն դիտուած: Ան պնդեց որ սերտ կապեր կան մէկ կողմէն մշակութային ժառանգութեան ոչնչացման ու միւս կողմէն՝ խտրականութեան, ազգագրական գտնումներու եւ ցեղասպանութեան միջեւ: Մշակութային ոչնչացումը միջեւ օրս տեսնուած է իւրաքանչիւր ցեղասպանութեան ընդմէջէն, եւ այդ կը կատարուի, երբ յանձնագործները կ'ոչնչացնեն ու կը գողնան զոհերուն մշակոյթն ու արուեստը: Ցարդ հաստատուած է որ ոչնչացումը ցեղասպանութեան գործընթացի հիմնական տարրն է»:

Անցնող դարաշրջանի մարդկանց իրաւունքներու մեծագոյն մարտահրաւերներէն մէկը՝ համայնքներու անունով արդարադատութեան հաստատումը եղած է, որոնց մշակոյթները ոչնչացուած ու գողցուած են, եւ կարենալ կանխել մշակոյթի վրայ առաջին հերթին ոտնձգութիւնները» ըսաւ Դոկտ. Ուաթենփօս. Աւելին, «Համաշխարհային ժառանգութեան» իտեալը յառաջացած է Երկրորդ Համաշխարհային պատերազմին ժամանակ տեղի ունեցած սարսափներու արդիւնքով եւ ենթադրուած է որ մշակոյթի յատուկ գործերը կը պատկանին ողջ մարդկութեան: Այս տեսակետն է որ կը պաշտպանէ Եունեսքօն (UNESCO) ժառանգութեան ոչնչացումը կանխարգելելու եւ զսպելու ծախողութեան համար՝ եւ որ քննադատութեան ենթարկուած է: Այսպիսով, ցոյց կը տրուի պետութիւններու առաջնահերթութիւնը, երբ խօսքը կը վերաբերի առնուելիք որոշումներուն:

Այդ ալ ցոյց տալու համար Դոկտ. Ուաթենփօս Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմին օրինակները տուաւ, ուր յստակ է որ դիտումաւոր մշակութային ոչնչացում էր տեղի ունեցածը: Ատրպէճանը թոյլ չի տար որ Եունեսքօյին կամ մշակութային դէտեր այցելէն Ղարաբաղի մէջ գտնուող Հայկական մշակութային ու կրօնական վայրերը: Հետեւաբար, կ'երեւի թէ մշակութային ժառանգութիւնը քաղաքականացուած է: Մշակութային ժառանգութիւնը պէտք չէ ըլլայ ոչ զենք եւ ոչ ալ թիրախ, այլ՝ խաղաղութեան հիմք», եզրափակեց Դոկտ. Ուաթենփօս իր զրոյցը, շեշտը դնելով մշակութային ժառանգութեան նկատմամբ համընդհանուր եւ ներառական մօտեցման անհրաժեշտութեան:

Երկրորդ բաժին: Թանգարաններ եւ Յիշատակում. Շարունակական արդարադատութեան բանաձեւ Գալիֆորնիոյ Համալսարանէն, (Պերքլի), Դոկտ. Աիմէտ Ռաշիտ Սալիմը, ազդեցիկ ներկայացումով բացատրեց Աֆղանիստանի մէջ լեզուի ու բանաստեղծութեան կարեւորութեան ու անոնց ոչնչացման մասին, յատկապէս երկրին մէջ Թալիպաններու իշխանութեան վերադարձին լոյսին տակ: Չնայած այն իրողութեան, որ Աֆղանիստանը փոքրամասնութիւններու ազգ է, գոյութիւն ունի Պարսկերէնը՝ որ մեծամասնութեան լեզուն է: Ֆարսին, մինչեւ վերջերս պաշտօնական լեզուն էր: Աւելին, Թալիպանները, կը զսպեն, կը նուազեցնեն ու կը փոխարինեն Պարսկերէնը Փուշթու լեզուով: Սա կը հանգեցնէ «Լեզուն զենքի վերածելու, որպէս ջնջման ճնշումներու, ժխտման ու կանխարգելման գործիք, որպէսզի համայնքներու մէջ անհատները չյաջողին պահպանել եւ յիշել թէ պատմութիւնը եւ թէ մշակոյթը, շարունակեց Դոկտ. Սալիմը: Ան ցոյց տուաւ թէ ինչպէս Թալիպանները կ'ոչնչացնեն ժառանգութիւնն ու արուեստը եւ թէ ինչպէս եզակի է երբ կ'ոչնչացնեն ամէն ինչ բացի իրենցինը:

Յոռետեսական եւ Լաւատեսական Դիրքերէ Անդին՝ Կը Հասնի՞նք Եսերը Գերանցող Իրատեսական Ուղի

ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ

Տարի, ամիս, օրեր իրարու կը յաջորդեն, կը խօսինք, կը վիճինք, զիրար կը դատաւիտենք, անկարող ըլլալով մեր հայրենիքին եւ ժողովուրդին սպառնացող վտանգները հեռացնելու: Իրականութիւնները կը վարագործենք գեղեցիկ խօսքով, քննադատական խօսքով, ինքնագոհական խօսքով, եւ մենք մեզ կը փորձենք համոզել, որ ազգի եւ հայրենիքի հարցերը կը լուծենք: Այդ թափահարումները սրահ յուզելու կամ զուարճացնելու սահմանէն անդին չեն երթար, կը ծառայեն դիրքապաշտութիւններու:

Մեր անկարողութեան եզրակացութիւնը այն է, որ մենք մեր մէջ չգտնելով ինքնապաշտպանութեան անհրաժեշտ ուժը, տեսութիւններ կը ներածենք եւ կը մշակենք, ցանկութիւններ կը յայտնենք, միամտօրէն հաւատալով, որ հեռուի կամ մօտի «բարեկամ» մը, «բարեկամներ», ամպագոռոտ անուններով «կազմակերպութիւններ», - օտար, միջազգային, - յանձնառութիւն պիտի ստանձնեն, մեր հայրենիքը եւ մեր ժողովուրդը ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ, մեր իրաւունքները վերականգնելու: Համակրական արտայայտութիւնները կը համարենք մեր հարցերուն լուծումներ բերելու կոչուած զօրասիւն կամ նաւատորմ, որոնք ճշմարտութեան յաղթանակը պիտի պարտադրեն, որոնք չեն եկած, չեն գար:

Կը շարունակենք այս կամ այն ՄԵԾը իրաւորել, անոր կողմէ ընդունուի, սպասել ընդունելութեան սրահի մը մուտքին, կամ «ի պատիւ» ճաշկերոյթներ կազմակերպել: Եթէ չգոհանանք քաղաքական տեղական-տեղայնական մանրութիւններով, ներհայաստանեան եւ հեռու ու մօտ վայրերու ներհամայնքային ցուցադրութիւններով, որոնք, համագումար, հիմնականը կը վարագործեն:

ՊԱՇՏՊԱՆԵԼ դժբախտ բառը քաղաքական եւ պատմական լուսաբանութեան կարիք ունի: Միափոխել եւ լատեններ կրնա՞նք երեւակայել, որ հայ ժողովուրդը եւ Հայաստանը պաշտպանելու համար այս կամ այն երկիրը, երկիրները, բանակ պիտի դրկեն, յանձն պիտի առնեն պատերազմի մեզի համար: Պէտք չէ ուրանալ. անոնք բոլորն ալ, ինչպէս միշտ ըրած են, պիտի հազնին Բարի Սամարացիի պարեգօտ, դեղ պիտի դրկեն, սնունդ, երբեմն ալ իրենց քսակները բանալով յատկացումներ պիտի ընեն զանազան «բարեխառններ»ու համար:

Արդէն առանց իրենց միտումները թաքցնելու, զանազան դրդապատճառներով առաջնորդողներ կան, ղեկավարներ, կուսակցութիւններ, Հայաստան թէ դուրսը անհատական-ակմբային մակարդակի վրայ կը ծանծաղողներ, - որոնք եզրակացուցած են, որ Հայաստան անկախ չի կրնար ըլլալ: Հետեւաբար Ռուսիոյ հետ, ինչպէս Պելառուսը ըրաւ, պէտք է մտնել քաղաքական-կազմակերպական «ՄԻՌԻԹԵԼԱԿԱՆ ՄԻՌԻԹԻԼ» համակարգի մը մէջ: Նման «ՄԻՌԻԹԻԼ» կրնայ երաշխաւորել բնակչութիւն-քաղաքացիին ապահովական եւ տնտեսական հարցերը, որ անհատներուն անմիջական կենսականն է: Չանգուածը մեծ-պետական եւ միջազգային հաւասարակշռութիւններու մարզանքներ չ'ըներ, այդ առաջնորդին գործն է:

Առաջնորդը ազգի եւ հայրենիքի ներկայի եւ ապագայի պատասխանատուն է: Ոչ ոք կը հաւատայ, որ «Արեւմտեան» երկիր մը Հայաստանի դաշնակից պիտի ըլլայ եւ անոր կողքին պիտի կռուի: Հետեւաբար, անմիջապէս կ'եզրակացուի, որ Ռուսիան միայն կրնայ ըլլալ այդ դաշնակիցը, այդպէս է արդէն գէթ ցարդ կնքուած համաձայնութիւններով: Ռուսիան Հայաստանի ռազմավարական դաշնակիցն է: Եթէ այդ «դաշնակցութիւն»ը լաւ չի գործեր, պատճառ կրնան համարուիլ Ռուսիոյ մեծ-պետական շահերը, բայց նաեւ մեր մեծերու ակումբին մէջ առանձին խաղալու սիրողական ճապկումները, երբ «հեռաւոր դաշնակիցներ» կը փնտռենք եւ կրկնէրենոյթները (միրաժ) իրականութիւն կը համարենք:

Եթէ Հայաստան հետեւի Պելառուսի օրինակին եւ Միութեանական Միութիւն կնքէ Ռուսիոյ հետ, թէ՛ դեռ վերջինը այդ ընդունի, հարց կը ծագի, թէ փոխարէն, ի՞նչ գին պէտք է վճարել ինքնուրոյն ազգ մը եւ անոր անկախ պետութիւնը: Ի՞նչ պիտի կորսնցնէ ի՞նչ շահելու համար:

Հայաստանի «Ուժեղ Հայաստանը Ռուսաստանի հետ. յանուն նոր Միութեան Շարժում» կուսակցութիւնը, իրապարակած է Ռուսիա-Պելառուս Միութեամբ ընդունուած սկզբունքները:

«ՄԻՌԻԹԵԼԱԿԱՆ ՄԻՌԻԹԻԼ» ստեղծման նոյեմբեր 4ի համաձայնութեամբ երկու երկիրներու համագործակցութիւնը կ'ամփոփուի հետեւեալ ձեւով.

ա. Արդիւնաբերական համարկում. համատեղ արտադրութիւններու զարգացում, արտադրողներու աջակցութեան միասնական քաղաքականութիւն, դիւրացում ապրանքներու շրջանառութեան, տնտեսվարողներու հաւասար պայմաններ՝ ծրագիրներու մրցոյթներու:

բ. Գիւղատնտեսական քաղաքականութեան միաւորում, վարչական խոչնդոտներու վերացում, նպաստելով գիւղատնտեսական ապրանքներու շրջանառութեան աճին, մթերային անվտանգութեան եւ գիւղատնտեսութեան զարգացման:

գ. Միասնական փոխադրական շուկայ, բաց սահմաններ, օդային երկաթգծի

եւ այլ տեղափոխումներու միասնական սակագիններ: Ինքնաշարժներու տեղափոխումներու միասնական ծրագրային սպասարկում, որ կը ջնջէ միջպետական սահմանները:

դ. Անդամ երկիրներու արտադրութիւններու ազատ ներածումներ:

ե. Անասնաբուժական եւ բուսաբանական վերահսկողութեան ընդհանուր կարգ, նոյնատեսակ վերահսկողութիւն, եւ արտադրութիւնները առանց խոչնդոտներու կը տեղափոխուին անդամ երկիրներու շուկաներ:

զ. Ուժանիւթի միասնական շուկայ: Անդամ երկիրները բնական կազ եւ ելեկտրականութիւն կը ստանան Ռուսիոյ ներքին գիներով: Հիւլեական ուժանիւթի համատեղ զարգացում:

է. Միութեանական պետութեան անդամ երկրները կ'ունենան նոյն ըկերային երաշխիքները եւ թոշակներու չափերը, կարիքաւորներու աջակցութիւնը կը նոյնացուի:

ը. Միութեանական պետութեան անդամները առանց սահմանափակումներու կրնան աշխատիլ այդ պետութիւններէն իւրաքանչիւրին մէջ:

թ. Անդամ պետութիւններու հարկային եւ մաքսային օրենսդրութիւններու ներդաշնակում: Պետական գնումներու մրցոյթներու մասնակցութեան հաւասար պայմաններ:

ժ. Զբօսաշրջութեան զարգացում. օրենսդրութեան նոյնացումով, որ կ'աւելցնէ զբօսաշրջիկներու փոխադարձ հոսքերը:

ժա. Միութեանական պետութեան քաղաքացիները հնարաւորութիւն կ'ունենան առանց սահմանափակումներու օգտուելու անդամ պետութիւններու դրամատնային ծառայութիւններէն:

ժբ. Միասնական պաշտպանական եւ անվտանգութեան համակարգ. անդամ պետութիւններու արտաքին սահմանները դիտարկել որպէս Միութեանական պետութեան սահմաններ եւ զանոնք պաշտպանել համատեղ ուժերով:

ժգ. Համակարգում համալսարանական եւ ակադեմիական կրթութեան, գիտական համագործակցութեան, մշակութային ու մարմնարգի ոլորտներու:

ժդ. Առողջապահական համակարգերու մերձեցում, յառաջադեմ, լաւագոյն բուժփնտրանքներու փորձի փոխանակութիւն, առողջապահական հնարաւորութիւններէն օգտուելու հաւասար հնարաւորութիւններ:

ժե. Ազգային արժեհամակարգերու պահպանում. ազգային, աւանդական, արեւելաքրիստոնէական արժեքներու համատեղ ուժերով պահպանում: Աւանդական ընտանիք, ազգային արժեքներ, քրիստոնէական բարոյականութիւն, սեռերու եւ սերունդներու միջեւ ներդաշնակ յարաբերութիւններ (ընդգծ. Յ.Պ.): Դաշնակցային (ֆետերատիֆ) պետութեան մը համար բնական եւ ընդունուած պայմաններ են ինչ որ նշուած է: Պիտոյնուի մէջ բնակչութեան շուրջ կ'եսի մայրենի լեզուն ռուսերէնն է, կը նշանակէ որ լեզուամշակութային խոչնդոտներ չկան: Հայաստան եթէ մտնէ նշուած «Միութեանական Միութեան» մէջ, ինչպէ՞ս հայերէնը պիտի մնայ պետական, վարչական, գիտական լեզու: Այդ համակարգին մաս կազմելով հայերէնը պիտի չվերածուի՝ տեղական բարբառի, աստիճանաբար դադարելով ազգային-մշակութային ինքնութեան կրող ըլլալ: Պէտք է մտածել հետեւանքներու մասին:

Հայաստան մաս կազմելով «Միութեանական Միութեան», ինչպէ՞ս պիտի հետապնդէ իր ազգային քաղաքականութիւնը: Այդ «Միութեան» համար քաղաքական օրակարգ պիտի ըլլա՞ն Արցախի հարցը, հայոց ցեղասպանութեան հարցը եւ անոր հետեւանքներուն վերացումը: Այսինքն, «Միութեանական Միութեան» մէջ Հայաստան պիտի ունենա՞յ իր ազգային ուրոյն քաղաքականութիւնը: Աւելի պարզ. այդ «Միութեան» քաղաքական օրակարգին մաս պիտի կազմէ՞ հայկական իրաւունքի հետապնդումը:

Նշուած կ'ետերու վերջինը, ազգային արժեհամակարգերու պաշտպանութեան գծով, դրական է, ընկերաբարոյական եւ մշակութային է, դրական է, բայց մեր կացութեան մէջ գտնուող ժողովուրդի մը պատմութիւնը եւ քաղաքական անլոյծ հարցերը չի ներառներ: Հայաստան կրնայ ունենալ նահանգային պաշտպանութեան եւ բարօրութիւն: Փակագիծի մէջ կը դրուին Հայաստանի եւ հայութեան ազգային-քաղաքական հիմնահարցերը:

Անմիջականի եւ հին սերերու համար քաղաքական աններելի սխալ կ'ըլլայ ազգային հարցերու անտեսումը եւ հուսկ՝ մոռացումը:

Երբ կը բացակայի ազգային հիմնական առաջնորդութիւնը, քաղաքականութիւնը կը վերածուի անմիջական լուծումներ որոնելու տեղական-տեղայնական ճապկումներու:

Ապագայակերտ լուծումները պիտի գան երբ 3+10 միլիոնի իրաւութեամբ մշակուած եւ կենսագործուող քաղաքականութիւն ունենանք, ոչ թէ մասնակիի համար, այլ ազգի յաւելեալ տեսիլքի իրականացման:

Այս ընելու համար եսերէ անդին ուսում պէտք է կատարել, նայիլ նոյն ուղղութեամբ, ինչ որ չենք ըրած եւ չենք ըներ:

Ինչպէ՞ս այդ ընել: Բայց ի՞նչ բանի համար են մտաւորականութիւնը եւ... ղեկավարութիւնը, իրաւը:

Տգիտութեան Գիտութիւնը


ԴԻԱԼՔԱ ՍԱՐԸԱՍԼԱՆ

Երկար ժամանակէ ի վեր կը մտածեմ գիտնալու եւ չգիտնալու մասին: Երկընտրանքներու համակարգի վրայ կառուցուած աշխարհի հակասութիւններէն մին ալ գիտնալն ու չգիտնալն է: Իմ կարծիքով, պատմութիւնը գետի մը նման անցեալէն մինչեւ այսօր իր հետ բերած է տեղեկութիւն: Ուստի, պատմութիւնը ոչ միայն գիտելիքը, այլեւ տգիտութիւնը բերած է ներկային եւ պիտի տանի ապագային: Գիտելիք ձեռք բերելու անհրաժեշտութիւնը, որ մարդկութեան համար կը պահէ իր այժմեականութիւնը՝ ծնունդէն մինչեւ մահ, ըստ Էուքեան, մարդու աշխարհին յարմարելու պարտաւորութեան ամենահիմնական ազդակն է:

Վերջին տարիներուն մեր ամենաշատ օգտագործած բառերէն մին եղած է «մեծ պատկեր»ը: Շատեր կը պնդեն, որ կը տեսնեն մեծ պատկերը, սակայն, իրականութեան մէջ անոնք ի՞նչ եւ որքա՞ն կը տեսնեն. աղքատութիւնը, անհաւասարակշռութիւնը, անարդարութիւնը, բնական տարածքներու ապականումը, կրթութեան համակարգի խնդիրները, տգիտութեան զանգուածայնացումը...

Այսօր մենք կ'ապրինք այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ, ուր քաղցկեղէ մինչեւ ծիսելու վնասներու, կլիմայի փոփոխութենէն մինչեւ ծինականօրէն ձեւափոխուած օրկանիզմներու նման նիւթերու պարագային մարդոց խարդախութիւնները եւ ապատեղեկատուութիւնը կը շարունակուին՝ իրականի եւ անիրականի միջեւ: Սա ցոյց կու տայ, որ «Ակնոթողութիւն» կոչուած գիտութիւնը մեծ տեղ գրաւած է աշխարհի վրայ: «Ակնոթողութիւն» պարզապէս կը նշանակէ «տգիտութեան գիտութիւն»: Յունարէնի մէջ «ակնոսիս» կը նշանակէ «տգիտութիւն», իսկ «օնթոլոգի»՝ «գոյաբանութիւն»: Անթոլոգի կամ ապրանք մը վաճառելու, կամ շահոյթ ստանալու նպատակով շփոթութեան եւ կեղծ տեղեկատուութեան դիտումնաւոր տարածման ուսումնասիրութիւնն է: Անթոլոգիի հիմնական նպատակն է խոչընդոտել խնդրոյ առարկայ կողմի ճիշդ գիտելիք ստանալը եւ հասարակութիւնները դարձնել տգետ՝ կեղծ տեղեկատուութիւնը որպէս ճշմարիտ ցոյց տալով: Հասկնալի է, որ մարդ մը չի կրնար հասկնալ վարդի մը հիւսուածքը առանց անոր դաշելու: Վարդին ծաղիկ ըլլալը գիտնալ չի նշանակեր, որ գիտենք ծաղիկներու մասին: Այս պատճառով կայ բուսաբանութիւն: Այս օրինակով կարելի է տեսնել Երկրի հետ մարդոց փոխգործակցութեան գործընթացի խիստ սահմանները: Այսինքն, ինչպէս որ տեղ մը հասնելու համար պէտք է շարժիլ, այնպէս ալ որեւէ առարկայի վերաբերեալ գիտելիք ունենալը մտածելու, ուսումնասիրելու, սորվելու եւ հարցադրելու նման շարք մը անհրաժեշտութիւններու արդիւնքն է:

Ուրեմն ինչո՞ւ մարդ մը տգետ կ'ըլլայ եւ միւսը՝ գիտուն: Որքան ցաւալի է, թէ տեղեկատուութեան դարաշրջանին գիտելիքը դարձած է առեւտուրի առարկայ: Գիտելիքի վաճառքը դրամի փոխարէն, հաւասարութեան եւ արդարութեան հիմքին դրուած ժուր մըն է: Գիրքեր, վաւերագրականներ, բնութեան իրողութիւններ, բնագիտութիւն եւ կրթութեան իրաւունք, որ օրէնքով տրուած է եւ սահմանափակուած՝ նոյնպէս օրէնքով ցոյց կու տան, թէ տեղեկատուութիւնը դրամի



փոխարէն վաճառուող առարկայ է: Կրթական հաստատութիւններէ ներս գիտելիքի փոխանցման եւ ձեռքբերման գործընթացը ամենայարմար օրինակն է այս անդրադարձի: Խղճի եւ տրամաբանութեան շրջանակներէն ներս կատարուած իւրաքանչիւր գնահատական մեզ կը տանի հետեւեալ եզրակացութեան. տեղեկատուութեան բաշխումը անհաւասար է: Սակայն երբ «գիտելիքը» կը գործէ բնութեան պայմաններուն յարմարելու եւ պայքարելու բնագոյով, այդ անհաւասարութիւնը որոշ չափով կրնայ նուազիլ:

Եկեք, ուսումնասիրենք «Ոչ թէ չգիտալը, այլ չսորվիլը ամօթ է» ասացուածքը: Առակին մէջ չսորվելու վիճակը, ըստ Էուքեան, գիտելիքը խրախուսելու միջոց է՝ մեղմօրէն արդարացնելով չգիտնալու ամօթը: Իսլամագետ Պուրզի Ճեմիերին կը հարցնեն. «Ինչո՞ւ չես դատապարտեր տգետները»: Ան կը պատասխանէ. «Մենք կոյրին տեսի՞ր, իսկ խուլին լսէ՞ չենք կրնար ըսել»: Արդարեւ, տգիտութեան ջուրով ողողուած ուղեղը նման է երկաթի, որ հետգիտելու կը ժանգոտի եւ զայն վերականգնել գրեթէ անկարելի կը դառնայ: Եթէ ժանգոտած երկաթ մը վնասէ մարդու մարմինը, անողոք հիւանդութիւններու պատճառ կրնայ դառնալ: Ցաւօք, պատմութիւնը ի՞նչ է նման օրինակներով: Տգետի ձայնը շատ ակելի բարձր է, քան գիտուններու, եւ յաճախ տգետը կը խօսի, մինչդեռ գիտունը կը լռէ: Նոյնիսկ այսօր, եթէ ուշադիր նայինք, հասարակական կեանքի որեւէ հատուածին մէջ տգետ մը կը մեղադրէ գիտունը՝ չգիտնալով: Ցաւալի է, թէ այն ինչ, որ նման մարդիկ կը կարծեն, որ գիտեն, սովորաբար լսած են կամ որդեգրած են ուրիշներէն: Թէեւ անոնց լսածները կամ որդեգրածները երբեմն գաղափարախօսութեան մը փշրանքներն են, կամ երբեմն կրնայ ըլլալ այդ փշրանքներէն ստեղծուած «վիթխարի» գաղափարախօսութիւն՝ տգիտութեան գաղափարախօսութիւն... Անկախ իրենց կոչումէն եւ պաշտօնէն՝ այս տեսակի մէջ ընդգրկուած մարդոց թիւը զգալի է:

Մարդու մը համար կատարելութիւնը, անշուշտ, ձգտում մը, հեռանկար մըն է: Բայց կատարելութեան հասնելու ձգտումը կը նմանի հետեւիլ հորիզոնին՝ որքան մօտենանք, այնքան կը հեռանանք անկէ: Կատարելութեան մօտենալու գլխաւոր միջոցներէն են դժգոհութիւնն ու քննադատութիւնը՝ մանաւանդ ինքնաքննադատութիւնը: Այն անձը, որ իր ուսումը, իր գիտութիւնը բաւարար կը տեսնէ, կը զրկուի նոյնիսկ քայլ մը առնելէ՝ կատարելութեան սանդուխներէն:

Այն օրը, երբ մենք ունեցուածքէ ակելի շատ պէտք կ'ունենանք գիտելիքի, այն ժամանակ կը գտնենք իսկական հարստութեան գաղտնիքը:

ԲԱՆ ՈՒ ԳԻՐ

Լեռներ Հայրենի

Ախ ինչքան, ինչքան կարօտել եմ ձեզ, Միգայանձ լեռներ հայոց աշխարհի, Վազել եմ յոգնել, ձեր լանջերում ես, Իմ լեռներ, լեռներ լեռներ հայրենի:

Ձեր գագաթներից ամպերն են սահել, Ինչպէս ձորն իջնող հօտը գառների, Կ'ուզէի հիմա ձեր գրկում լինել, Ձեզ փարուել կրկին, լեռներ հայրենի:


Զմրուխտայ լեռներ, սիրտս ձեզ թողի, Ու ինձ հետ տարայ բոլոր վարդերի, Իմ երակներին ուժն է մայր հողի, Իմ լեռներ, լեռներ, լեռներ հայրենի:

ՎԱՀԱՆ ԱՐԱՍՈՒՆԻ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

21 2021
ԴԵԿՏԵՄԲԵՐ

Կրկ	Երկ	Երք	Չրք	Հնգ	Ուրք	Շբթ
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	



ՌԻՇԱՐ ԺԵՐԱՆԵԱՆ
(1921 – 2019)
«Այգին»

Լիբանանահայ Կեանք

ՀԲԸՄ-ը Համաժողով Մը Կը Կազմակերպէ Ցեղասպանութեան Մասին...

Սկիզբը Էջ 05

Ի վերջոյ, ան հարց տուաւ թէ ինչպէս կրնանք ուրուագծել մշակոյթը եւ որտեղ կրնանք կանգ առնել մշակութային ոչնչացման ու բռնութեան ազդեցութիւնները քննարկելով, որոնք անխուսափելիօրէն կը վերածուին բռնութեան այլ ձեւերու:

Դոկտ. Սալիմը կ'ըզրակացնէ Աֆղանիստանցի բանաստեղծ Ուսէֆ Պախթարի մէկ բանաստեղծութեամբ, ուր ՄԻԻՄԻՆ ոչնչացման մասին կը խօսի:

Երկրորդ մասը բաժնուած է երկու հիմնական բաժանումներու, որոնք կը վերաբերին փոխանակելի թեմաներու:-

Ա) Պարակտուած հասարակութիւններու Մշակութային միջամտութիւն՝ Ատրպէյճանէն ու Հայաստանէն Պատմութիւններ.

. Հետազոտող, քննիչ Պրն. Սիմոն Մաղաքեանը ներկայացուց եւ ցոյց տուաւ 15 տարիներու մշակութային ակերտութիւնները, որոնք տեղի ունեցած են Նախիջեւանի մէջ, Ատրպէյճանցիներուն ձեռամբ: Նախիջեւանը հարուստ է իր բնիկ հայկական ժառանգութեամբ եւ կը պարունակէ 28.000 մշակութային արժէքներ: Պրն. Մաղաքեան ակերտութեան ժառանգութիւնները ցոյց տալու համար օգտագործեց չորս տեսակի ապացոյցներ:-

Արբանեակային նկարներ, ակա-նատեսներու վկայութիւններ, հանրային հրամանագրեր, պետական արխիւներու եւ անհատներու աղբիւրներէ լուսանկարներ: Այս շատ հետաքրքիր ներկայացումը ցոյց տուաւ թէ որքան կարեւոր յուշարձաններ ու վայրեր կան, ինչպիսին է Նախիջեւանի ամենամեծ Հայկական գերեզմանատունը՝ Ջուլֆայի գերեզմանատունը, որ, այժմ ամբողջութեամբ ակերտած ու քանդուած է: Պրն. Մաղաքեան իր ներդրումը աւարտեց՝ զգուշացնելով որ կան այլ վայրեր եւս, որոնք վտանգուած են ու պայման չէ որ անոնց ոչնչացումը անմիջապէս իրագործուի. Երբեմն քանի մը տարիներ կ'առնէ որ կառավարութիւնը ոչնչացնէ ՄԻԻՄԻՆ ժառանգութիւնը:

. Politics First ամսագրի հրատարակիչ ու Ռուսաստանի փորձագետ Դոկտ. Մարքըս Փափատոփոլոս իր խօսքը սկսաւ ընդգծելով համաշխարհային անտարբերութիւնը եւ Առաջին Համաշխարհային

պատերազմին ընթացքին Հայ ժողովուրդին նկատմամբ եղած մեծ անարդարութիւնը՝ «Հայոց Ցեղասպանութիւնը մարդկութեան պատմութեան մէջ ամենաանտեսուած զանգուածային սպանութիւններէն մէկն է» շեշտեց ան: Այդ միայն չի սահմանափակուիր այդ ժամանակամիջոցի միջազգային արձագանքի բացակայութեամբ, այլեւ Մեծն Փրիտանիոյ եւ Իսրայէլի նման հզօր պետութիւններու կողմէ ցեղասպանութեան բռն ժխտումով, հիմնականին մէջ՝ քաղաքական ու տնտեսական շահերու պատճառով: Դոկտ. Փափատոփոլոսը շարունակեց իր զեկուցումը, տարբեր ջարդեր ու զանգուածային վայրագութիւններ նկարագրելով, ուր Ատրպէյճանցիները գործադրեցին Հայերուն դէմ, պատմութեան տարբեր հանգրուաններուն, հիմնականին մէջ՝ Խորհրդային Միութեան փլուզման ու Արցախեան Առաջին պատերազմի տարիներուն: Աւելին, ակնյայտ է, որ Հայերուն նկատմամբ, Ատրպէյճանի պետութեան հիմնական յատկանիշը՝ իրենց ատելութիւնը՝ շատ յաճախ Հայերուն անուանելով «Անհաւատներ» եւ «Կենդանիներ»: Բաց աստի, Դոկտ. Փափատոփոլոսը շեշտեց որ «Ողորմելի եւ ողբալի մակարդակը Հայոց Ցեղասպանութեան մասին իրազեկումն է աշխարհի մէջ» առանցքային գործն է թէ համաշխարհային հասարակութիւններու կողմէ պատերազմի նկատմամբ քիչ հետաքրքրութիւն կար:

Բ) Իրաքի եւ Սուրիոյ Մշակութային ոչնչացման իրաւական հետեւանքները Դոկտ. Ալի Ալ Նաշմին, Իրաքցի հետազոտող եւ պատմաբան, քննարկեց մշակոյթին սկիզբը եւ թէ ինչպէս համայնքները նպաստած են տարբեր մշակոյթներու ստեղծման գործընթացին: Մշակոյթները կը ստեղծուին մէկ կողմէն հասարակութեան եւ հողի միջեւ երկարատեւ յարաբերութիւններով, միւս կողմէ, հասարակութեան եւ տարածաշրջանային միջավայրերու յարաբերութիւններուն միջեւ: Այդ հաստատուելու համար անհրաժեշտ է հարկւրաւոր եւ հազարաւոր տարիներ: Հետեւաբար, երբ մշակոյթի մէկ կողմը կը թիրախաւորուի, ամբողջ մշակոյթը կը փոխուի կամ կ'ոչնչանայ:

Դոկտ. Ալի Նաշմին ուսումնասիրած է Իրաքեան մշակոյթը եւ ինչպէս

տարբեր «բնօրինակ համայնքները» իրենց մշակոյթը կը կազմեն: Ան շեշտեց որ «Փոքրամասնութիւն» բառը նուաստացուցիչ է, եւ անոր փոխարէն պէտք է «Բնօրինակ Համայնք» օգտագործուի: Աւելին, ան շեշտեց որ այդ համայնքներէն մի քանին, ինչպիսի են քրիստոնեաները, Շիաները, Եզիդիները, Բիւրտերն ու Հայերը կարեւոր տեղ ունեցած են ու թերեւս ունին Իրաքեան մշակոյթի ձեւաւորման գործին մէջ՝ Հետեւաբար, Տայէշի կողմէն անոնցմէ որեւէ մէկուն թիրախաւորումը ողջ Իրաքեան մշակոյթին թիրախ է: Տայէշի կողմէ վայրերու, մարդկանց ու խորհրդանիշներու ոչնչացումը կը յանգեցնէ Իրաքեան մշակոյթին ամբողջական ցնցումը՝ զոր կախեալ է այս բնօրինակ համայնքներէն: Վերջին բանախօսը եղաւ Պրն. Ալաւա Ալ Սայէտ՝ Սուրիացի փաստաբան եւ հասարակական գործիչ Պրն. Ալ Սայէտ ցոյց տուաւ թէ ինչպէս Հայէպի մէջ զանազան մշակութային կեդրոններ՝ պատմական տաճարներ, շէքեր,

արձաններ, եկեղեցիներ եւ մզկիթներ նպատակաւորաբար կ'երպով ոչնչացուած են Սուրիական վերջին պատերազմին ընթացքին: Ոչ միայն այդ, այլ 400 ամեայ վարժարաններ ու հին գրադարաններ եւս թիրախ դարձած են: Մշակութային այս քանդումները ցոյց կու տան թէ յանձնագործը աշխատանք կը տանի պատմութեան, մշակոյթի, կրթութեան ու կրօնի եւ գիտելիքի ոչնչացման: Այս մշակութային ցեղասպանութիւնը մասնաւորապէս մարդիկը չթիրախաւորեց, այլ անոնց ժառանգութեան խորքն ու գոյութիւնը: Պրն. Ալ Սայէտ աւարտեց քննարկելով Հայէպի մէջ մեկնարկուած Նախա-ձեռնութիւնը, զոր կը վերաբերի մշակոյթի, կրօնի եւ պատմութեան տեղեկատուութեան թվանցումը, զանոնք այս կամ այլ նպատակով պաշտպանելու մտահոգութեամբ: Քննարկումներէն ետք, հարց պատասխանի համար քանի մը վայրկեան տրամադրուեցաւ մասնակիցներուն, դասախօսներուն եւ հանդիսատեսներուն:



ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՏՕՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ

Քրիստոնեական եկեղեցւոյ առաջին սարկաւագին եւ Նախավկային՝ Ս. Ստեփանոսի տօնին առիթով, Կիրակի, 26 Դեկտեմբեր 2021-ին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ

Հանդիսապետութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

պիտի պատարագէ եւ յաւուր պատշաճի քարոզէ
ԳԵՐՇ. Տ. ԿՈՄԻՏԱՍ ԱՐՔ. ՕՅԱՆԵԱՆ

Ս. Պատարագի աւարտին, սարկաւագաց տօնին առիթով, Դպրեվանքի սարկաւագները գեղարուեստական յայտագիր մը պիտի ներկայացնեն Վեհարանի դահլիճէն ներս, ապա Վեհափառ Հայրապետը իր Հայրապետական պատգամը պիտի ուղղէ:

Սիրով կը հրաւիրենք մեր ժողովուրդի բոլոր զաւակները աղօթակից դառնալու Դպրեվանքի սարկաւագաց դասուն: Նշենք, որ Ս. Պատարագը ուղիղ պիտի սփռուի Կաթողիկոսարանի CiliciaTV-ի Facebook-ի եւ YouTube-ի էջերէն: